

# ԱՄՈՒՍՆԱԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ

## 5 հարցերի կարճ պատասխաններ

### 1 Ի՞նչ կարգով է կատարվում ամուսնալուծությունը:

Ամուսնությունը կարող է լուծվել ինչպես **ՔԿԱԳ մարմնում**, այնպես էլ **դատական կարգով**:



### 2 Ինչպե՞ս է ամուսնալուծությունը կատարվում ՔԿԱԳ մարմնում:

ՔԿԱԳ մարմնում ամուսնալուծությունը գրանցելու համար անհրաժեշտ է՝



- ա) ամուսինների **համատեղ դիմումը**՝ փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծության պետական գրանցում կատարելու համար, կամ
- բ) ամուսիններից **մեկի դիմումը**, եթե մյուսին դատարանը ճանաչել է **անհայտ բացակայող կամ անգործունակ**, կամ մյուսը դատարանի դատավճռով դատապարտվել է **ազատազրկման**,
- գ) ամուսիններից **մեկի դիմումը** և դատարանի օրինական ուժի մեջ մտած **վճիռը**՝ դատական կարգով **ամուսնալուծություն** կատարելու դեպքում:

### 3 Ո՞ր դեպքերում է ամուսնալուծությունը կատարվում դատական կարգով:


Ամուսնալուծությունը կատարվում է դատական կարգով, եթե՝

- ա) բացակայում է ամուսիններից **մեկի համաձայնությունը**,
- բ) ամուսիններից մեկը **խուսափում է** ամուսնալուծության պետական գրանցում կատարելուց,
- գ) ամուսինները ցանկանում են **փոխադարձ համաձայնությամբ** ամուսնալուծվել դատական կարգով:



### 4 Ո՞ր հարցերն է դատարանը պարտավոր քննել ամուսնալուծության գործի շրջանակներում:

Ամուսինների միջև **համաձայնության բացակայության** դեպքում դատարանը պարտավոր է՝



- ա) որոշել, թե **ամուսնալուծությունից հետո** ծնողներից ում հետ պետք է ապրեն **երեխաները**,
- բ) որոշել, թե որ ծնողից և ինչ չափով պետք է **ալիմենտ բռնագանձվի**,
- գ) պահանջի առկայության դեպքում՝ կատարել ամուսինների ընդհանուր սեփականությունը համարվող **գույքի բաժանումը**,
- դ) ամուսնուց ապրուստի միջոց ստանալու իրավունք ունեցող մյուս ամուսնու պահանջով **որոշել այդ միջոցների չափը**:

### 5 Ե՞րբ է դադարում ամուսնությունը:

Ամուսնությունը, որը լուծվում է դատական կարգով, համարվում է դադարած դատարանի **վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից**:

